ԳԼՈՒԽ ՄԺԲ.

Ամենայն պարտական եթէ յառաջ քան զգանդատելոյն պարտատիրաց իւրոց յօրինեսցի համարս ամենայն ստացուածոց իւրոց և պարտուց և մուծանէ առն դատաստանի որում աշխարհի ինքն ընակի, և երդմնեսցի առաջի դատաւորի արդարութիւնն յօրինեալ համարոյն իւրոյ, նոյն ժամանակ գոցի թուղթ ազատութեան 'ի պարտուց, և յանձն արասցէ ամենայն ստացուածս իւր 'ի ձեռին դատաստանի, զի դատաստանն, ընտրելով ոմն յանձնեսցի ստացուածքն պարտականին 'ի ձեռին ընտրելոյն իւրոյ հրամանաւ, զի վաճառեսցի ստացուածք պարտականին, 'ի նմանէ հատուցանէ ֆի հարիւրին հինգ վարձ վաստակող առն ընտրելոյն, և հարիւրին մին կերակուր պարտականին, և հարիւրին ինանուն և չորս, մնացորդն հաւասարապէս բաժանեսցի 'ի վերայ պարտատերաց, և պարտականն ազատ մնասցէ 'ի մնացորդ պարտուց իւրոյ։

ԳԼՈՒԽ ՄԺԳ.

Ամենայն պարտական որ թաքուցանէ ինչս իւր 'ի պարտատերէ իւրմէ և զինքն յօրինեսցի առաջի դատաստանի համարս սուտ, և եթէ հաստատեալ գտցի ստացուածք նմայ գաղեալ, պարտականն այն մի գտցի ազատութիւն 'ի պար-